Է· ՏԱՐԻ 1858 — ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 15 ԱՐԵԳ 4382 — Հ· Տ· 23 ՄԱՐՏ 1890 — Ն· Տ· 4 ԱՊՐԻԼ 1890 — ՀԻՃՐ· 13 ՇԱՊԱՆ 1307 — ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ

[illegible]

درعلیه ده غلطه ده نورادونکیان خانده آره ولك غزته سی اداره سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ — ԹԻՒՆ

[illegible]	160
[illegible]	80
[illegible]	40
[illegible]	200
[illegible]	100
[illegible]	56
[illegible]	28

[illegible]

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ· ՊՈԼԻՍ, 23 ՄԱՐՏ, 1890

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ինչո՞ւ համար ճշգրիտ խիստ քիչ ծանօթութիւն ունինք հայ երկրագործութեան վիճակին վրայ. Ինչո՞ւ համար վիճակագրական որոշ տեղեկութիւնք կը պակսին հայաբնակ գաւառաց հողային բերքերու քանակութեան ու վաճառականութեան, մշակաց և հողատէրց յարաբերական պայմաններուն և հայ երկրագործութեան հետ սերտիւ կապակցեալ հազար ու մէկ խնդիրներուն վրայ։ — Որովհետեւ ուսումնասիրութեան արժանի խնդիր մը չէ համարուած երկրագործութիւնն ի մեզ. Մեր երկրագործական բերքերն առեւտրական հրապարակին վրայ չեն երեւիր, և՝ ամբողջովին տեղական սպառման յատկացեալ՝ իբրեւ տուրեւառի առարկայ չեն գրաւեր արտաքին աշխարհի ուշն. Հայ երկրագործաց վիճակին վրայ պարբերաբար տեղեկութիւնք լոյս տեսած են, բայց ուրի՛շ տեսութեամբ, երկրին ընդհանուր պայմանաց տեսութեամբ, աւելի երկրագործաց քան երկրագործութեան վիճակը պարզելու կէտին. Այս երկու քննութիւնք իրարմէ տարբեր բաներ են սակայն, և լոկ տնտեսագիտական ուսումնասիրութիւն մեծ կարեւորութիւն կրնար ունենալ. Այս խնդիրը կը ներկայացնենք հայ մասնագէտ երկրագործներու լուրջ նկատառութեան. Եւրոպեան հեղինակներու և եւրոպեան մեթոտներու հետեւողութեամբ երկրագործութեան վրայ գրելն օգտակար է. Բայց Թուրքիոյ երկրագործութեան վրայ ազդելու առաջին պայմանն այն երկրագործութիւնը մասնագէտի աչօք հետազօտելն է.

Եւ իրօք, ժամանակ է որ ուշադրութիւն դարձնենք երկրագործութեան վրայ. Եւրոպա կարող է արհեստական նիւթեր աւելի գեղեցիկ և աւելի աժան շինելով ղրկել մեզ, և խոտիւ մղել մեր արհեստագործաց դէմ. Բայց բովանդակ քաղաքակիրթ աշխարհը չէ կարող մեր հացը ղրկել մեզ, արմտիք և ընդեղէնք ղրկել մեզ. Այս բաները նախ և առաջ մեր երկրագործներէն կը խնդրենք, և երբ անոնք չկարենան հայթայթել, ա՛ն ատեն միայն օտարէն — Ռուսիայէն և Ռումանիայէն — բերել կուտանք. Հիմակ ամէն տարի Թուրքիա մեծաքանակ գումարներ կը վճարէ ռուս, ռումէն և պուլկար երկրագործաց, որովհետեւ Փոքր Ասիոյ երկրագործք մեզ պէտք եղած արմտիքը չեն տար. Հագուստի կապուստի, արդուզարդի, կահկարասեաց և հազար ու մէկ արհեստական չքայլութեանց մասին եւրոպեան մրցումէ կրնանք գանգատիլ. բայց մեր երկիր եւրոպեան մրցումէ վախ չի կրնար ունենալ արտադրելու համար ցորեն, գարի, հաճար, բրինձ, լուբիա, բակլա, ամէն տեսակ միսեր, իւղեր, պանիրներ, այլովքն հանդերձ. որովհետեւ եթէ երկաթ և հանքածուխ՝ գործարանաց այն անհրաժեշտ պիտոյք՝ համեմատապէս կը պակսին Թուրքիոյ, բայց երկրագործութեան և դուարարուծութեան դերազանցապէս յարմար են օսմանեան գաւառք.

* * *

Ճամբաներ, ապահովութիւն և արհեստական կատարելութիւն երեք անհրաժեշտ պայմաններն են երկրագործութեան ու դուարարուծութեան յառաջդիմութեան, որպէս զի կենաց անհրաժեշտ պիտոյքն օտար երկիրներէն գնելու չհարկադրինք. Կանոնաւոր ճամբաներ շատ շինուած են արդէն, և մէկ կողմէ կը շինուին, և եթէ երկաթուղիք աւելի արագ չեն շինուիր, գլխաւոր պատճառն այն է թէ դրամատէրց եւ ձեռնարկուաց քով հաստատ համոզում կայ թէ բաւական ժամանակ վնասով պիտի բանին նոր երկաթուղիք, երկրագործական բերքերու կողմէ ներքին գաւառաց աղքատութեան պատճառաւ. Ապահովութեան աստիճանն հետզհետէ կ'աւելնայ քանի որ քաղաքակրթութիւնն յառաջդիմէ. Կանոնաւոր ճամբաներ և երկաթուղիներ ապահովութեան գլխաւոր գործականներն են ամէն երկրի մէջ. Կը մնայ երրորդ պայմանն, արհեստական կատարելութիւնն, և յայտնի է թէ այս երրորդ պայմանը գոհացնելու համար բան մ'ըրած չունինք. Չափազանցութիւն չէ ըսել թէ Նոյ նահապետին Արարատ լեռնէն վար իջնելով ի կիր արկած երկրագործութիւնն իւր սերունդք անփոփոխ կը շարունակեն նոյն գաւառաց մէջ. Իրաւ, մեր երկրագործք եւրոպայեան չափ արհեստական միջոցներու դիմելու պէտք չունին. Ընդհանրապէս հողն առատ է ի մեզ, և քիչ մշակուած լինելով շատ յոգնած չէ, որով առանց արհեստական միջոցներու կարող է մեծապէս արդիւնաբերել. Բայց մշակութեանց տեսակները փոխել, ամէն հողի իւր պահանջմանց համաձայն մշակութիւն տալ և տեսակներն ազնուացնել՝ կ'ենթադրեն քիչ շատ արհեստական կատարելութիւն. Եւ յետոյ, հայ երկրագործք ցորեն և գարի միայն արտադրել գիտեն. Դուարարուծութեան և գիւղատնտեսութեան հոգ չեն տանիր. Եւ սակայն շահու մեծ աղբիւր մը կայ հոս. Մեր պարարտ արօտավայրերու մէջ արածող կովերուն կաթէն ընտիր կարագներ, իւղեր և պանիրներ կրնան շինուիլ, որոց փոխադրութիւնն աւելի դիւրին է, որով շահն անմիջական. Այս տեսակ կաթնատնտեսութեան արտադրութիւնք, որք Փոքր Ասիայէն Կ. Պոլիս կը բերուին՝ դիւրաւ կը վաճառին, թէեւ շատ դէշ պատրաստուած լինին, և ցաւալի է հաստատել թէ այս թերի արտադրութեանց մէջ իսկ հայ երկրագործք ընաւ բաժին չունին.

Ոմանք կը մտածեն որ եթէ մեր արհեստաւորք, քաղաքացի և աւելի բանգէտ, աւելի մշակեալ մարդիկ լինելով հանդերձ, եւրոպեան կատարելագոյն մեթոտներն խիրացնելու անփոյթ կամ անկարող կը գտնուին, գիւղացի երկրագործք, որք անհամեմատ աւելի յետնեալ վիճակի մէջ են զարգացման տեսակէտով, ի՞նչ կրնան ընել իրենց նախապատմական դրութիւնները բարւոքելու.

Խնդիրն այս կերպիւ առաջարկելով անլուծելի կը մնայ. Եթէ գիւղատնտեսական մեթոտները բարւոքելու համար պէտք է սպասենք գիւղացւոց լուսաւորութեան, սերունդներ պէտք է անցնին տնտեսական բարւոքման ճամբուն մէջ քայլ մը չառած. Բարեբախտաբար, բանն այնպէս չէ. Երկրագործութիւնն ու դուարարուծութիւնը բարւոքելու համար բոլոր գիւղացիներն ուսումնական մարդիկ ընել անհրաժեշտ պայման չէ. Այս տնտեսական կամ արհեստական բարւոքմունք գլխաւորապէս հողատէրց կամ ագարակատէրց գործն են, որք հասարակ մշակներէ տարբեր և քիչ մը աւելի բարձր դասու մարդիկ են սովորաբար, և յառաջդիմական մեթոտներու աւելի դիւրաւ կրնան ընտելանալ. Զարգացեալ մնաց տէր ձեռներէց ագարակատէր մը կարող է մասնագէտ երկրագործի միջոցաւ կարգ մը բարւոքումներ մուծանել ագարակին մէջ, և քիչ քիչ իւր մշակները վարժեցընել տալ նոր մեթոտներու. Օրինակի համար, անցեալներն երկտող ծանօթութիւն մը տուած էինք Եալովայի ազգային ագարակին մէջ գործադրելու ձեռնարկուած նոր դրութեան մը վրայ, որ յոյս կայ թէ նպաստէ այն կալուածն արդիւնաւորելու. Տեղացի և շրջակայ մշակներ քսան տարի առաջ ինչ որ գիտէին երկրագործութեան ու կաթնատնտեսութեան վրայ, այսօր բառ մ'աւելի չեն գիտեր հաւանօրէն, բայց այս ագարակը կարելի է քսան տարի առաջուան վիճակէն աւելի արդիւնաւոր վիճակի վերածել շնորհիւ արուեստական նոր մեթոտներու. Ագարակին վերին տեսչութիւնը կը գտնուի Տէր Սիմէոն Սրբազանի ձեռաց մէջ, և պատուաբեր բան մ'է որ Ն. Սրբազնութիւն ազգային կալուածն արդիւնաբեր հանդիսացնելու համար եւրոպեան գաղափարներու դիմում մ'ըրած է, մասնագէտ տնօրէն մը կարգելով յանձին Խ. Մամիկոնեան էֆէնտիի, և նոր ոճով հարկաւոր բարեփոխութեանց գործադրման փոյթ տանելով. Կը լսենք նոյն իսկ թէ եւրոպեան լաւագոյն կարագներու համահաւասար ընտիր կարագ պատրաստելու ձեռնարկուած է, և կ'երեւի թէ եւրոպեան այն առաջնակարգ պանիրներ որք մայրաքաղաքիս մէջ այնչափ կը հաւնուին և սուղ կը գնուին, պիտի կրնան պատրաստուիլ այս ագարակի մէջ, առանց մեծ դժուարութեան և հաւանօրէն առանց մեծ ծախուց. Ուրեմն, անհնար չէ եւրոպեան մեթոտներն ի կիր առնուլ մեր արտօրէից և մեր ագարակաց մէջ, մեր անասունները պարարտացնել և անոնց կաթէն օգուտ քաղել արուեստական լաւագոյն միջոցներով, անոնց տեսակն ազնուացնել և մշակութիւնները բարւոքել. Ինչ որ Եալովայի մէջ փորձուած է, և՝ որչափ գիտենք՝ յաջողապէս փորձուած է, երկրին ներսերն ալ կրնայ փորձուիլ. Միակ կատարեալ գործեալ ագարակ մը ամբողջ գաւառակի մը երկրագործական ու գիւղատնտեսական յառաջդիմութեան մեծ զարկ կարող է տալ. Կը յուսանք որ այս ազգային ագարակ օր մը այնպիսի վիճակ մը ստանայ որ Նիկոմիդիոյ գաւառին և Բիւթանիան ծովեզերաց բովանդակ հողատէրց համար տիպար ագարակ մը դառնայ. Կայս. Կառավարութիւնը գաւառաց մէջ տեղ տեղ տիպար ագարակներ հաստատելու ձեռնարկելով, կարեւոր բարենորոգման մը գաղափարն ունեցած է, որ կ'երեւի թէ ամուլ չի մնար. Ասանք աշակերտներ արտադրելով երկրին տնտեսական զարգացման ուղղապէս նպաստելէ զատ, անուղղակիօրէն ալ կրնան նպաստել՝ հին մեթոտներու վրայ նորերուն առաւելութիւնն արդեամբ ցոյց տալով բնիկ երկրագործաց և ագարակատէրց, և անոնց բարի նախանձը շարժելով.

* * *

Փափաքելի էր որ այս խնդրոց վրայ մասնագէտ գրիչներ գրելով՝ արծարծէին տնտեսական խնդիրները, մանաւանդ երկրագործութեան մասին, որ մեր երկրին ապրուստի մեծագոյն միջոցն եղած է անցեալին մէջ, և ապագային մէջ ալ այնպէս պիտի լինի, ո՛ր չափ ալ մեր երկիր Եւրոպիոյ հետ սերտ յարաբերութեան մտնէ. Ամէն երկիր գերազանցապէս կը յաջողի աշխատութեան այն ճիւղերուն մէջ որոց բնական մեծագոյն յարմարութիւն ունի, և հետեւապէս մեր երկրին համար երկրագործութիւնն, իւր զանազան ճիւղերով, ինչպէս դուարարուծութիւն, գիւղատնտեսութիւն, պարտիզպանութիւն, այգեպանութիւն, մասնաւոր հոգածութեան առարկայ պէտք է լինի. Իւր ծանրածանր զբաղմանց մէջ, Կայս. Կառավարութիւնն այս խնդրոյն ուշադրութիւն նուիրելու միջոց կը գտնէ մերթ ընդ մերթ. Մեր ազգն ևս, նախնեացմէ ժառանգած երկրագործական բարեմասնութեամբք, ձեռնտու պէտք է լինի կառավարական հոգածութեան, և հայ գիտնականք ու մասնագէտք պէտք չէ թերանան գաղափարները պատրաստելու տնտեսական նոր և լուսաւորեալ ուղղութեան մը.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԻԶՄԱՐՔԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՊԵՐԼԻՆԷ

ՍՐՏԱՇԱՐԺ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Պիզմարք իշխանին Պերլինէ վերջնապէս մեկնելուն առթիւ, Պերլինի ժողովուրդն համակրանաց ագմկալից ցոյցեր ըրաւ. Ֆէյկարոյի Թղթակիցը կը հեռագրէ թէ այս առթիւ Գերմանիոյ մայրաքաղաքին ընծայած տեսարանն աննկարագրելի էր, և մարդու միտքէն չէր անցներ թէ գերմանական եռանդն այնպիսի սաստիկ ձեւեր կարենար առնուլ. Անցեալ շաբաթ միջօրէին եղած լրագիրք ծանուցած լինելով թէ Պիզմարք իշխան երեկոյեան ժամ 11ին կը մեկնի (մեր ժամով,) քաղաքացւոց մէկ մեծ մասն ճամբուն վրայ դիզուեցաւ. Վիլհէլմշտրասէի նախարարապետական պալատէն մինչեւ Համպուրկի երկաթուղւոյն կայարանն, որ քառորդ ժամու ճամբայ է կառքով, աւելի քան 100.000 մարդ շարուած էին ճամբուն երկու կողմն. Ոստիկանութիւնն և զինուորք դժուարութիւն կը կրէին ճամբան բաց պահելու. Դիմացանց տունակք կառքերու մէջ յառաջ անկիւն մը գրաւած էին. Ընդ թմբենեօք կոչուած հոյակապ պողոտային պատուհանները գլուխներով ծածկուած էին.

Պիզմարք իշխան մինչեւ ժամ $9\frac{1}{2}$ հրաժեշտի համար եկողներն ընդունեց. Յետոյ հրաժեշտի ողջոյնը տուաւ նախարարապետական պալատի պաշտօնէից, որոցմէ շատեր կուլային, և իշխանն ալ յուզուած էր. Առաջին կառքը նստաւ իշխանն իւր Հէրպէրթ որդւոյն հետ. Իշխանը նստելուն պէս, կառքին մէջ ցանկեց «պատմական» վիլխարի շունն որ երբեք չի զատուիր իւր տիրոջմէն. (Ասոր ընկերն անցեալ տարի մեռաւ.) Երկրորդ կառքին մէջ բազմեցաւ Պիզմարք իշխանուհին, իւր կրտսեր որդւոյն՝ Վիլհէլմ կոմսին և կոմսուհւոյն հետ. Հրաժարեալ նախարարապետին դէմքը տեսնելու համար բազմութիւնն հրեց խուժեց ոստիկանութեան շղթայն. Պաշարեցին Պիզմարքի կառքն, որոյ մէջ փունջեր ու ծաղիկներ կը նետէին ամէն կողմէ, վերէն, վարէն ու քովէն. Պիզմարքի ձեռքերը խլեցին, համբոյրներով ծածկեցին և արտասուօք թրջեցին. Երկաթեայ աշխարհավարն ինք ևս կուլար. Երբ Յաղթութեան սիւնին մօտ եկաւ կառքը, Պիզմարք իշխան ծաղիկներու ներքեւ կ'անհետանար. Պատուհաններէն թաշկինակներով իրենց հրաժեշտի ողջոյնը կուտային սիրուն ձեռքեր, ընդ որս Ֆրետերիկ կայսրուհին, Անգլիոյ դեսպանատան պատուհանէն, թաշկինակ ի ձեռին կ'երեւէր. Իշխանին կառքն Ազէնի կամուրջէն անցած պահուն աներելի հրմշտուկ մը տեղի ունեցաւ զօրաց ու ժողովրդեան մէջ. քիչ մնաց որ ոստիկանք ջուրը թափէին. Մեծ դժուարութեամբ յառաջանալով բազմութեան մէջէն, որ [illegible] կ'աղաղակէր անընդհատ՝ ազգային երգերով համեմեալ, կառքն հազիւ մէկ ժամէն կրցաւ կտրել մէկ քառորդ ժամու ճամբայն, և հասաւ երկաթուղւոյ կայարանը, զոր գրահապատ զօրքեր բազմութեան առջեւ փակել կ'ուզէին, բայց չյաջողեցան.

Հոն, կայարանին մէջ, ամբոխին խելացնոր եռանդն յիմարութեան հասաւ. Երամնին Թողածնին չէին գիտեր այս սովորաբար պաղարիւն Գերմանացիք. Ամենքը միաբերան կ'երգէին [illegible] հանրածանօթ երգը, [illegible] պոռալով իշխանին երեսն ի վեր. Կայարանապետը զանգակն հնչեցուց և մեկնման նշանը տուաւ. բայց ամբոխը գնաց գծին վրայ դիզուեցաւ շոգեկառքին առջեւ. Զօր. Գափրիվի և այլ բարձրաստիճան անձնաւորութիւնք դժուարաւ մտեցան Պիզմարք իշխանին՝ վերջին հրաժեշտը տալու.

Հինգ վայրկեան պոռալէ և աղաչելէ յետոյ, պաշտօնեայք և ոստիկանք հազիւ կարողացան բազմութիւնը մի կողմ ընել, և կառախումբին ճամբայ բանալ. Որովհետեւ հասարակ կառախումբ մ'էր այս, շատ մարդիկ անով ուղեկցեցան իշխանին. Բազմութենէն ոմանք յառաջացան դէպ ի վակոնն ուր կը գտնուէր իշխանն, և աղաղակեցին [illegible]. «Ո՛չ» պատասխանեց իշխանն Պիզմարք. «այլ ևս չպիտի վերադառնանք». Իշխանն ևս պատուհանը գալով, արտասուալից աչօք ըսաւ. «Մնա՛ք բարեաւ, վերջնականապէս մնա՛ք բարեաւ».

«Այն պահուն ուր կառախումբը կ'անհետանար դէպ ի Համպուրկ, ուրիշ կառախումբ մը կը հասնէր ի կայարան՝ Պերլին երթալով, լի այն գործաւորներով որք գործարաններէն քաղաք կը վերադառնային. Վաղուան Գերմանիան կուգար ի հանդէս, մինչ երեկի Գերմանիան կ'անհետանար կառախմբին հետ որ կ'առնուր կը տանէր զայն».

* * *

Ֆէյկարոյի Թղթակիցն որ Պիզմարք իշխանին ընկերակցած է մինչեւ Ֆրիտրիխսրուէ, կը պատմէ Պիզմարքեան ագարակաց և կալուածոց տնօրէն Պ. Լանկէի հետ իւր մէկ խօսակցութիւն. Պ. Լանկէ ցոյց տալով իշխանական ընդարձակ անտառաց մէկ մասն, ըսեր է թէ 1872ին այս անտառք ողորմելի վիճակի մէջ էին, և բոլոր մշակութիւնք իշխանին գործն են, որ ամենէն մեծ ինչպէս ամենէն փոքր բաներն ինք կը տնօրինէ. Այժմ 7.000 հեքթառ տարածութիւն ունին. (Մէկ հեքթառ 10.000 քառակուսի մեթրօ տարածութիւն ըսել է.) Պ. Լանկէ ըսեր է. «Իշխանը նորէն քաղաքականութեամբ զբաղելու փափաք չպիտի ունենայ. Բանիցս ըսած էր ինծ թէ իւր իղձն է ագարակատիրոջ կեանք վարել. Տասն տարիէն աւելի է որ ըսաւ ինծ. «Կը տեսնե՛ս, Լանկէ, իմ իղձս է հոս ագարակիս մէջ հանգիստ մեռնիլ».

— Հակէնովի քաղաքապետն ըսաւ. «Աստուած երկար օրեր տայ նախարարապետին». — «Այո՛, պատասխանեց Պիզմարք. բայց հանգստութեան մէջ».

— Վիլհէլմ կայսր ըսեր է թէ ամրան պիտի գայ տեսնել Պիզմարք իշխանը.

— Ի Ֆրիտրիխսրուէ իշխանին զինուորական ողջոյն մատոյց գրահապատ զօրաց գունդ մը. Իշխանն ըսաւ. «Այս ի՛նչ պատիւներ. բայց ես ամէն իշխանութիւններս, տիտղոսներս և առանձնաշնորհումներս Կայսեր յանձնած և հրաժարած եմ, եւ այժմ պարզ զօրավար մ'եմ գործէ դադրած».

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՄԱՌԻ

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԴՐԱԽՏ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

—Ուրիշ փաստ չունիմ, պարոն դատաւոր.

—Գէթ ապացոյց մը պիտի տա՞ք ձեր պատմածներուն ճիշդ ըլլալուն.

—Լաւագոյն ապացոյցը՝ գտնուած պանքանոտներն են, պատասխանեց ջաղացպանը միամտութեամբ.

—Պահ մը առաջ, երբ իմացաք թէ ձեր ոճիրն երեւան ելած է ու անկարելի է այլ ևս ստել, այն ատեն միայն պատմեցիք ինծ այդ շինծու պատմութիւնը որուն վրան բաց մնաց. Ձեր առաջին ստախօսութեան վրայ նոր սուտ մըն ալ կ'աւելցնէք, առաջինէն աւելի անհաւատալի. Հէյօյն, կը յորդորեմ զքեզ խոստովանիլ գործած ոճիրդ, եթէ կ'ուզես որ դատական իշխանութիւնն՝ հաւատալով քու զղջմանդ՝ քեզ նկատմամբ ներողամիտ հանդիսանայ.

—Իմ զղջո՞ւմս. Բայց ես ոճիր չեմ գործած. Ներողամտութի՞ւն. բայց ես ներողամտութեան պէտք չունիմ. Վերջապէս ի՞նչ բան իմ երեսիս կուտաք. Շանդկրէյլէի ծառաստանին մէջ ինն հազար ֆրանք գտայ. Ինծի համար պահեցի զայն. Սըխալեցայ. Չէի ուզեր պահել. Կ'ուզէի Սէրտօնի գիւղապետին տանիլ յանձնել. Ինծի վիշտ կը պատճառէր տանս մէջ պահել այդ ստակն որ իմս չէր. Կինս ընդդիմացաւ. Ա՛հ, կինը՛. Յանցանքն իրն է, այս բանս կրնամ ըսել ձեզ, պարոն դատաւոր, այս պատահածներուն յանցանքն իրն է. Եթէ փոխանակ իր խօսքին ականջ կախելու, իմ առաջին շարժմանս հետեւած ըլլայի... Այո՛, գտած ստակս ինծ համար պահեցի. Աղէկ չըրի այսպէս շարժելովս. Յանցանք էր. Կը խոստովանիմ. Թո՛ղ պատժեն զիս այս բանիս համար, եթէ հարկ է որ պատժուիմ. Բայց թէ այդ ստակը գողցած եմ, ո՛չ, չեմ ուզեր որ այդպիսի բան մը ըսեն ինծի, պարոն դատաւոր. Գալով Վիրժինի Լաթուշ պառաւին սպանման, հոգ չէ թէ այդ բանն ինծի վերագրեն, վասն զի ապահով եմ թէ ո՛չ մէկը պիտի հաւատայ.

—Այդ ստակը գտնելնուդ վրայ մէկուն խօսք բացա՞ծ էք.

—Ո՛չ մէկուն.

—Այդ անակնկալ հարստութեան գաղտնիքը մի միայն ձեզ պահելու քաջութիւնն ունեցա՞ք.

—Զայն ինքզինքիս համար միայն պահելու յանցանքն ունենալուս, չէի կրնար ուրիշներուն հաղորդել այդ գաղտնիքը.

—Եւ մտքերնուդ չանցուցի՞ք թէ ինչպէս կրնայ ըլլալ որ այդ ստակը կորսուած կրնար ըլլալ Շանդկրէյլէի անտառին մէջ ուսկից դու եւ կինդ միայն կ'անցնիք.

—Այո՛, այդ բանը մտածեցի. Սակայն այնքան դիպուածներ կան որոց գաղտնիքը չպարզուիր.

—Քանի մը օրեր, յաջորդաբար, անտառապահ Ժան-Ժանը տեսած է որ կինդ Ֆէյնի Տան շրջակայքը կը թափառէր, և իրիկուն մը նշմարած է որ՝ անտառին մէջ զքեզ փնտռելէն օգուտ քաղելով՝ կաղնիի մը տակէն գացած հանած ես նիւթեր զորս դուցէ երկար ժամանակէ ի վեր պահած էիր.

Ջաղացպանը, զարմացած, գլուխը վեր առաւ.

Եւ ջանալով լսած խօսքերն յիշել.

—Ի՞նչ ըսիք. Ժան-Ժա՛նը. Պահուած նիւթե՛ր հանել հողէն. Բարեհաճեցէք կրկնել, պարոն դատաւոր, աղէկ չհասկցայ.

Դատաւորն ըսածը կրկնեց.

Աւելի ևս զարմացած, ջաղացպանը գլուխը կը քերէր.

—Չեմ գիտեր, բնաւ չեմ գիտեր թէ ի՛նչ ըսել կուզէք.

—Դուն այդ ինը հազար ֆրանքը գողցար Քուրաժօյի մահուան օրը. Վախնալով որ կասկածի առիթ չտաս, գացիր անտառին մէջ պահեցիր զայն ու քննութեանց ելքին սպասեցիր զանոնք առնելու համար. Բաւական է, արդարեւ, պանքանոտները քննել տեսնելու համար թէ խոնաւութեան մէջ պահուած են. Այս մանրամասնութեանց ճշգութիւնը կուրանա՞ս.

—Բայց այո՛, պարոն դատաւոր, կ'ուրանամ, գոչեց ջաղացպանը. Ես ոչինչ գողցած եմ, ոչի՛նչ պահած, ոչինչ հողէն հանած.

—Լա՛ւ, ըսաւ դատաւորը.

Քանի մը ծանօթութիւններ ի գիր առաւ, Թուղթերը ժողվեց և Միռ-ա-Մօռ նորէն բանտ տարուեցաւ.

Յաջորդ օրը, դատաւորը Շանդկրէյլ գնաց, ոստիկանին ընկերակցութեամբ. Նախ և առաջ կ'ուզէր խուզարկութիւն մը ընել ջաղացքին մէջ և յետոյ Լա Հէյօնը հարցաքննել.

Գեղջկուհին իր տունն էր, առանց լուր մը ունենալու իր ամուսինէն և սաստիկ մտահոգութեան մը մատնուած. Իր մտահոգութիւնը կրկնապատկուեցաւ երբ Պ. Բէռօշէլի ու Պ. Մարէսքոյի գալը տեսաւ.

Իր առաջին մտածումն ան եղաւ թէ զինքն ալ ձերբակալելու եկած լին ու միւն պիտի տանէին.

—Տիկին, ըսաւ դատաւորն, իր պաշտօնական հանդամանքն յայտնելէ յետոյ, հաճեցէք ինծ յանձնել վեց հազար ֆրանքի պանքանոտները որք ջաղացքին մէջ պահուած ըլլալու են.

Լա Հէյօն խելքն բռնեց թէ երկիր ամէն բան յայտնած էր, եւ սակայն այնքա՛ն սաստիկ էր իր արծաթսիրութիւնը, այնքա՛ն կապուած էր մանաւանդ այդ ստակը կորսնցնելուն համար, այդ ստակն որ գողութեան կամ սպանութեան արդիւնք էր և որ այնքա՛ն մտահոգութիւն պատճառած էր իրեն, որ չուզեց անմիջապէս խոստովանիլ. Զարմանք կեղծեց. Վեց հազար ֆրա՛նք. Ի՞նչ վեց հազար ֆրանքի խօսք կ'ընէին. Այդքան գումար մը գտնուած չէր բնաւ ջաղացքին մէջ. Այդ պարոնները կը սխալէին.

Առանց ժամանակ կորսնցնելու, Մարէսքօ մանրախոյզ խուզարկութիւն մը կատարեց. Սակայն արդիւնք չտուաւ այն. Լա Հէյօն շատոնց ի վեր զգուշութիւններ ձեռք առած էր, եւ հազիւ Միռ-ա-Մօռ Շանդկրէյլէ հեռացած էր, Մարէսքոյի ու ոստիկան զինուորաց ընկերակցութեամբ, եւ ահա պառաւը տուփի մը մէջ կը պահէր մնացեալ վեց պանքանոտներն ու կը տանէր թաղել ծառաստանին մէջ ուստից գտած էր զայնս ամուսինը.

—Գուշակելու էինք թէ այսպէս պիտի ըլլար. ըսաւ Մարէսքօ առ Պ. Բէռօշէլ.

Բայց սա, անհամբերութեամբ, յոնքը պռստեց.

—Ժամանակ չենք կրնար կորսնցնել, ըսաւ ջաղացպանուհւոյն. Եթէ հինգ վայրկեանի մէջ մեզ չյանձնես այդ գումարը զքեզ կը ձերբակալեմ.

Լա Հէյօն, յամառաբար, գնաց անկիւն մը նստաւ, չհնազանդելու մտադրութեամբ.

—Թո՛ղ բռնեն զիս, կըսէր ինքնին. ի՞նչ կ'ըլլայ. Մինչեւ վերջը չեն կրնար վար դնել. Եւ բանտէն ելլելուս պէս, պանքանոտները նորէն կը գտնեմ.

Պ. Բէռօշէլ քանի մը հարցում ուղղեց անոր, նոյն այն հարցումները որոց պատասխանած էր Միռ-ա-Մօռ. Լա Հէյօնն ալ, իր ամուսնոյն նման, ըսաւ թէ իրենց խնայողութեամբ ձեռք բերած էին այդ ստակը. Բայց երբ Պ. Բէռօշէլ անոր ցոյց տուաւ ամուսնոյն յայտարարութիւնը, գեղջկուհին ալ խոստովանեցաւ թէ ինը հազար ֆրանքը գետնէն գտնուած էր.

—Այս կեղծ պատմութիւնը վարպետութեամբ պատրաստուած է ասոնց կողմէ, ըսաւ դատաւորը Մարէսքոյին, և դժուար պիտի ըլլայ աւելի ընդարձակ բացատրութիւններ առնուլ. Մեզի համար կարեւորագոյն բանը՝ գումարին մնացորդը գտնելն է. Թերեւս մնացեալ վեց պանքանոտներուն մէջ գտնենք մեր փնտռած թիւերուն երկրորդը.

—Ապահովապէս պիտի գտնենք, պարոն դատաւոր.

—Այս կինը պանքանոտները դաշտին մէջ պահած ըլլալու է.

—Բաւական է որ իր վրայ չի կրէ զայնս.

—Այնքան հաւանական չերեւիր ինծ. Կը վախնայ որ վրան գլուխը կը խուզարկեն.

—Կը փափագէի խնդիրք մը ուղղել պարոն դատաւորին, բայց չեմ համարձակիր.

—Ի՞նչ բան, պարոն Մարէսքօ.

—Ես միջոց մը գիտեմ Լա Հէյօնը խօսեցնել տալու.

—Ի՞նչ է.

—Այդ իմ գաղտնիքս է.

—Չէ՞ք կրնար ինծ հաղորդել զայն.

(Շարունակելի)

—Պերլինէ չմեկնած, Պիսմարք Շարլոթէնպուրկ գնաց, և Վիլհէլմ Ա. Կայսեր դամբարանն իջնելով, իւր ծերունի երախտագէտ տիրոջ գերեզմանին վրայ վար դեր դրաւ, և կէս ժամու չափ ծնրադիր խորին մտածմամբ անցուց հոն.

ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍՐ

Վիլհէլմ կայսր անցեալ ուրբաթ ներկայ գտնուեցաւ Պերլինի մարմնամարզի դասատուաց մարզարանին վերջին փորձերուն. Նօթանաստն աշակերտք որք կը պատրաստուին մարմնամարզի դասատու լինել՝ ճարտար շարժումներ կատարեցին, զորս դիտելով, կայսրը գոհունակութիւն յայտնեց, ինքն ևս քաջ մարմնամարզիկ ըլլալով, և յայտարարեց թէ մեծ կարևորութիւն կուտայ մարմնամարզի ընկերութեանց և հաստատութեանց, որք կրօնի երիտասարդութիւն մը կը պատրաստեն գերման ազգին. Ցոյս յայտնեց թէ այս ընկերութիւնք և հաստատութիւնք իրենց անդամները պիտի զգուշացնեն յեղափոխական ձգտումներէ. Արդէն մարմնամարզը՝ լաւ մարզելով մարմինը՝ միտք և զգացմանց բորբոքումը կը խաղաղեցնէ, և փառաւոր գրգռութիւններէ զերծ կը պահէ պատանեկութիւնն և երիտասարդութիւնն.

ԷՅՖԷԼԻ ԱՇՏԱՐԱԿԸ

Ֆրանսացիք ժամանակէ մը հետէ կը հարցնէին թէ «Ո՞ւր պահեր են Էյֆէլի Աշտարակն». որովհետև՝ Արուեստահանդէսի միջոցին չափազանց ուշադրութիւն գրաւած՝ Արուեստահանդէսին փակումէն ի վեր անտես եղած էր 300 մեթրոնոց Աշտարակը.

Կարևոր նորոգութիւնք ի գործ դրրուելով, անցեալ կիւրակի Էյֆէլի Աշտարակը վերստին բացուեցաւ հասարակաց այցելութեան. Կիւրակի և տօն օրեր մուտքը կէս գին է.

ՖՐԱՆՍԱՑԻՔ Ի ՊԵՐԼԻՆ

Ֆրանսական շատ մը լրագրեր այն համոզումն ունին թէ Գործաւորական Դեսպանախորհրդոյ որոշմունք պլատոնական բաղձանք պիտի լինին միայն, քանի որ անոնց գործադրութիւնն անձնիւր Պետութեան կամքին թողեալ է. Բայց նաև կ'ըսեն թէ Պ. Ժիւլ Սիմոնի և ընկերաց ի Պերլին այցելութիւնը քաղաքական լաւ արդիւնք կարող է տալ. Կը գնահատուի այն սիրալիր ընդունելութիւն զոր Ֆրետերիկ կայսրուհին ըրած է Պ. Ժիւլ Սիմոնի. Կայսրն ևս իւր հրաժեշտի ունկնդրութեան առթիւ մտերմաբար ընթրելով ու թէյ խմելով պատուիրակաց հետ, մանաւոր համակրութեամբ վարուած է Ֆրանսացւոց հետ.

ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Մէսաժըրիի Փէյհօ շոգենաւն որ այս օրերս Մարսիլիա հասաւ, Հապէշաստանէն լուրեր բերաւ, որք կը ծանուցանեն թէ իտալեան կառավարութեան կողմէ հրատարակուած հեռագրաց հակառակ, իտալեան զօրաբանակն, ընդ հրամանօք Օրէրօ զօրավարին, ծանր պարտութիւն մը կրած է Ռաս Ալուլայի Հապէշ բանակին կողմէ և ա՛յս պատճառաւ և ո՛չ թէ ինքնայօժար նահանջած է Ատուա քաղաքէն. Հապէշ սպարապետը թող տուեր է որ Իտալացիք յառաջանան, և այնպէս կարգադրեր է որ բաւական յառաջանալէն ետքն Իտալացիք երկու կրակի մէջ առնուին, մին ետևէն՝ ի Մասուա շարժմամբ մը, միւսն առաջակողմէն՝ Հապէշ զօրաց կողմէ. Մասուայի շարժումը ժամանակէն յառաջ յայտնուելով, իտալացիք դատեցին և դատապարտեցին ապըստամբապետները. Բայց Ռաս Ալուլա ինք յաջողեր է հապէշական լեռնադաշտի մը մէջ յանկարծ Իտալացւոց վրայ յարձակիլ, որք կարծելով թէ ամեն կողմէ պաշարուած են, ի փախուստ աճապարեր են ծանր կորուստներով, և Օրէրօ զօրավար իւր բանակին բեկորները ժողվելով, դժուարաւ նահանջեր է ի Մասուա.

ԱԶԳԱՅԻ՛Ն ԼՈՒՐԵՐ

Ուսումնական Խորհուրդն իւր նախընթաց աւուր նստին մէջ խորհրդակցութիւններ կատարեց Ուսումնական Ակմբի կազմակերպութեան նկատմամբ. Խորհուրդն որոշեց իւր պակասեալ երկու անդամոց տեղ Ազգ. վարչութեան առաջարկել Կիւլպէնկեան Յովհաննէս և Ալեանաքեան Գրիգոր էֆէնտիները.

Եկեղեցական երեսփոխանաց համեմատականի ընտրութիւնն այսօր տեղի կ'ունենայ ի Պատրիարքարան. կրօնական Ժողովոյ կողմէ կարգեալ յանձնաժողովոյն միջոցաւ.

Երուսաղեմայ միաբանութեան հաշուոց քննութեան համար Ազգային Ժողովէն կարգեալ քննիչ յանձնաժողովն այսօր վերստին ի նիստ կը գումարի, յանձնաժողովոյ անդամներէն Պաբքճեան Յովհաննէս էֆէնտիի գրասենեկին մէջ.

Ազամեանի հիւանդութեան լուրը՝ Ռուսահայոց մէջ յարուցած է ընդհանուր համակրութեան շարժում մը տաղանդաւոր արուեստագէտին նըկատմամբ. Մինչ, յիշելով Ազամեանի ժանկագին ծառայութիւնները հայ բեմին և հայ լեզուին, ջերմ հրաւէր կը կարդայ օգնելու հիւանդ արուեստագէտին, և այս «ոչ թէ իբր բարեգործութիւն, այլ իբրև պարտք». Ի Թիֆլիս և ի Բագու, արդէն մասնախումբեր կազմուած են, և մարտ 10ին Թիֆլիսի ժողովարանին մէջ ներկայացում մը պիտի տրուէր. Թիֆլիսէն երկու ազնուահոգի ազգայիններ և Մոսկուայի հայ գաղթականութենէն արդէն նպաստներ եղած են մեծանուն արուեստագէտին.

Կը ցաւինք ըսելու թէ Կ. Պոլիս միայն անտարբեր աչօք կը դիտէ իւր այդ արժանաւոր զաւկին վիճակը. Շատեր արդարև փափաքներ ունին «բան մը ընելու», բայց օդին մէջ խօսքեր ետեւ կը լուին և ուրիշ ոչինչ. Կ'սպասենք գոնէ որ Մազաքեան էֆէնտի, որ Ազամեանի կենաց ընկերն եղած է այնքան տարիներ, ներկայացում մը, նուագահանդէս և կամ նըմանօրինակ հանդէս մը կազմակերպէ. Ազամեանի համակրողներուն թիւն այնքան շատ է, որ այդ օրինակ ձեռնարկի մը յաջողութիւնը տարակոյս չվերցներ.

Կայսերական պալատան քաղաքական դիւանի քարտուղար թարգման Գառնիկ էֆ. Հիսարեան, երէկ Իրաւագիտական վարժարանի վկայական ստացած է. Գառնիկ էֆ. օսմ. ձեռութեան կարող և հաւատարիմ պաշտօնեայներէն մին է, և այս լուր խնդութեամբ պիտի ընու իր բազմաթիւ բարեկամները.

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ցառաջիկայ Ս. Զատկի առթիւ միմեանց այցելութիւններէ զերծ մնալու համար, Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի հաստատութեան մէկ մէկ մեճիտ նուիրած են Տեարք.

1. Միքայէլ	Յակոբեան
2. Տիգրան	Կիւմիւշկերտան
3. Պատրիկ	Կիւլպէնկեան
4. Մաթէոս	Ռ. Նճեան
5. Արիկ	Ռ. Նճեան
6. Սահակ	Ղազարոսեան
7. Միհրան	Յովակիմեան
8. Պօղոս	Էքսէրճեան
9. Գրիգոր	Արապեան
10. Ալեքսան	Խօրասանճեան
11. Մասէհ	Մասէհեան
12. Համբարձում	Մազպուլեան
13. Յակոբ	Մազպուլեան
14. Նիքոթ	Սեպրոսեան
15. Մանուկ	Արզրեան
16. Բարթիկ	Մնաիկեան
17. Աւետիս	Քօլոլեան
18. Պապիկ	Քալչըեան
19. Գաբրիէլ	Էլիկիւզէլ
20. Աբեթիկ	Նեվրուզ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Տնտեսական Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան

Ս. Երուսաղեմայ վաքըֆէն Գում գափու Թիւլպէնճի Հիւսամէտտին Թաղ. Մէքթէպ փողոց թիւ 33 տունը՝ որ 250 կանգուն գետնի վրայ կառուցեալ է և ունի վեց սենեակ, երկու սրահ, երկու ջրհեղջ, մէկ ջրհոր, մէկ մախզէն և 250 կանգուն պարտէզ, Պատրիարքարանի որոշմամբ վաճառելու համար աճուրդի դրուած է.

Գնելու փափաքողք կը հրաւիրուին բաց ի կիւրակէ և տօն օրերէն մինչ նոր կիւրակէ (ապրիլ 8) ամէն օր ժամ 4էն 10 ներկայանալ Ազգ. Պատրիարքարանն Անշարժ ...ստան տեսուչ Բլատեան Սեպուհ էֆէնտիի. 2—3

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Կրթական Տնօրէնութեան Ազգ. Կեդր. Վարչութեան

Մէկ քանի ուսուցիչք և դաստիարակք ի պատրաստի կան պաշտօն ստանձնելու համար մայրաքաղաքիս և կամ գաւառաց Ազգ. վարժարանաց մէջ.

Պէտք ունեցողք կը հրաւիրուին դիմել առ Տեսչութիւնս ի Պատրիարքարանի.

20 մարտ 1890 1—3

ՆԵՐՔԻ՛Ն ԼՈՒՐԵՐ

ԻՏԱԼԻՈՅ ԳԱՀԱԺԱՌԱՆԳՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

ԻՇԽԱՆՆ Ի ՏԱՐՏԱՆԷԼ

Վիքթօռ Էմմանուէլ իշխանն ի Հիսարլըք կատարուած հնախուզութիւնները աչքէ անցնելէ յետոյ վերադարձեր է ի Տարտանէլ, ուր մեծ պատիւներով ընդունուեր է Պիղալի կառավարչին և այլ պաշտօնէից կողմէ.

Ն. Բարձրութիւն պահ մը հանգիստ առնելէ յետոյ իւր հետևորդաց հետ դէպ ի մայրաքաղաքս ճամբայ ելեր է Ֆէշ-ի- շոգենաւով. Իշխանն այսօր աստ կը ժամանէ.

Իշխանն անցեալներ ի Ֆերիգիւղ Խրիմու պատերազմին մէջ մեռնող իտալացի զինուորաց դամբարանն այցելած պահուն, փափաք յայտնած է որ դամբարանին վրայ գիզալերտ թագ մը դրուի, որուն մէկ կողմը ոսկեզօծ գրերով արձանագրուի իւր անունն և միւս կողմը իւր ի Կ. Պոլիս ըրած այցելութեան թուականը. Իշխանին այս փափաքը գործադրուած է.

ՏԱՐԵԴԱՐՁ ԾՆՆԴԵԱՆ ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆԻ

Վեհ. Սուլթանն՝ իւր ծննդեան տարեդարձին առթիւ, հրամայած է որ կեդրոնական բանտին մէջ գտնուող այն բանտարկեալք, որք աւարտած են իրենց պատժոյն երեք չորրորդմասն, ազատ արձակուին.

Դատական Նախարարութիւնը՝ կայսերական Իրատէին համաձայն, այդ կարգի վաթսուն և չորս բանտարկելոց անունները պարունակող տումար մը պատրաստեց և ներկայացուց կայսերական պալատան առաջին քարտուղարութեան.

ՍՈՒՐԲԷԻ ՀԻՒՄԱՅՈՒՆ

Վեհ. Սուլթանին հրամանաւ վաղը տեղի պիտի ունենայ Սուրբէի Հիւմայունի հանդէսն. Սուրբէի Հիւմայունն, որ Էվգաֆի նախարարութեան կողմէ պատրաստուած էր, երէկ կայսերական պալատ տարուեցաւ.

ՊԷՐԱԹ ԿԻՃԷՍԻ

Շէյխ-իւլ-Իսլամի Դուար փաւերացուցած է Ագրիանուպոլսոյ Շէրիի դատարանին վճռագիրը թէ Շապան Ամիսն սկսած է շաբաթ օրէն. Հետևաբար Պոլսոյ Դատաւորին կողմէ տրրուած վճռագրոյ մը համաձայն, որ մատուցուած է Վեհ. Սուլթանին, վաղը նոյն ամսոյ 15րդ օրն ըլլալով, այս գիշեր Պէրաթ կիճէսիի տօնն է. Ըստ այսմ տասն և հինգ օր մնացած է Ռամազան ամսոյ.

Պէրաթ կիճէսիի տօնին առթիւ այս գիշեր մզկիթներու մինարէները կանթեղներով պիտի զարդարուին և հանդիսաւոր բարեմաղթութիւնք պիտի ըլլան վասն կենաց և բարօրութեան Վեհ. Սուլթանին.

Վաղն ևս բոլոր նախարարք և աւագանին կայս. պալատ պիտի երթան ի շնորհաւորութիւն.

ՕՍՄ. ՊԱՐՏԱՏՈՄՍԲ

Նախարարաց խորհրդոյ չորեքշաբթի աւուր նստին մէջ նախարարք տեղեկացան այն բանակցութեանց որք կատարուած էին առջի օրը Ըլմտական պաշտօնատան մէջ տեղի ունեցած գումարման մէջ (որուն վրայ ծանօթութիւն հաղորդեցինք երեկի թուով). Պարտատոմսից փոփոխման (արտաքին և ներքին) կրկին ծրագիրք քննուելով հաստատուեցան նախարարաց կողմէ և նպաստաւոր տեղեկագրով մը կայս. դիւանին ղրկուեցան, Վեհ. Սուլթանի վաւերացման մատուցուելու համար.

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Երէկ Իրաւագիտական կայս. վարժարանի մէջ կատարուեցաւ այս տարուան շրջանաւարտից մէկ մասին վկայականաց բաշխումն ի ներկայութեան կրթական Նախարար Վսեմ. Մինիֆ փաշայի, դատական Նախկին Նախարար և վարժարանին Միջազգային Օրինաց ուսուցիչ Վսեմ. Հասան Ֆէհմի փաշայի, վարժարանին Տնօրէն Վսեմ. Ազիզ պէյի, վերաքննիչ ատենի նախագահ Քոսթաքի էֆէնտիի և այլ պաշտօնատարաց ոմանց.

Իրաւագիտական վկայական ստացան 37 ուսանողք որոց 21ը թուրք, 9ը հայ, 6ը յոյն և 1ը հրեայ.

Ահաւասիկ անուանք հայ շրջանաւարտից.

Արթուր էֆ.	Մազաքեան	Կ. Պոլսեցի
Միսաք »	Մակարեան	Կարնեցի
Գառնիկ »	Հիսարլեան	Կ. Պոլսեցի
Գէորգ »	Կիւրեղեան	Ռոտոսթոցի
Նասիպ »	Եավրուեան	Պրուսացի
Գէորգ »	Մեծատուրեան	Բինկեանցի
Միհրան »	Քէրովբէեան	Կեսարացի
Գէորգ »	Ալիքսանեան	Արմտանցի
Սարգիս »	Գարաքօչեան	Ա. Պոլսեցի

Վսեմ. Մինիֆ փաշա անձամբ յանձնեց վկայականները շրջանաւարտ ուսանողաց և այս առթիւ ազդու յորդորական մը խօսեցաւ.

Ի Բ. ԴՈՒՌՆ

Երէկ Բարձր. Մեծ-Եպարքոսին նախագահութեամբ նախարարական յանձնաժողով մը ի նիստ գումարեցաւ և ինչ ինչ կարևոր խնդրոց վրայ խորհրդակցեցաւ.

—Ամերիկեան դեսպան Պ. Սալամոն Հիրշ երէկ Բ. Դուռն երթալով, տեսակցեցաւ Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին և Վսեմ. Խորհրդականին հետ.

ԼԸՔՈՒՔ ՓԱՇԱ

Ֆրանսական կառավարութիւնը Օֆֆիսիէ տը Լ'Էնսթրիւքսիօն Բիւպլիք աստիճանին յատուկ պատուանշանը նուիրած է Միրլիվա Լըքոք փաշայի, ուսուցիչ երկաթուղեաց և տեղագրութեան զինուորական վարժարանի սպայակոյտի կարգերուն.

ԿԱՅՍ. ՇՆՈՐՀ

Վեհ. Սուլթանը հրամայած է իւր մասնաւոր արկղէն հազար հինգ հարիւր ոսկի շնորհել ի նպաստ Հիճազի սովելոց, որոց համար, ինչպէս յայտնի է, յանձնաժողով մը կազմուած է ընդ նախագահութեամբ Էվգաֆի նախարար Րիզա փաշայի.

ՕՏԱՐ ԴԱՏՈՒԱՆՇԱՆ

Պարսկական կառավարութիւնն աֆթապ ու շիր պատուանշանը նուիրած է Թէհրանի օսմանեան դեսպան Խալիտ պէյի.

ԿՐԷՏԷ

Կրէտէի հելլենական նորընտիր ընդհանուր հիւպատոս Պ. Կէննատիոս Հանեայ ժամանելուն արժանավայել պատիւներով ընդունուեր է տեղական կառավարութեան կողմէ. Զինուորաց գումարտակ մը ևս զինուորական պատիւներ մատուցեր է. Շաքիր փաշա երկար տեսակցութիւն մը ունեցեր է Պ. Կէննատիոսի հետ.

Հելլենական հիւպատոսն Աթէնքէ մեկնելէն առաջ նախարարապետ Պ. Թրիքուբիէ և արտաքին գործոց նախարարէն հրահանգ ստացեր է որպէսզի Կրէտէի տեղական կառավարութեան հետ համերաշխութեամբ ամեն ջանք ի գործ դնէ ընդհանուր խաղաղութիւնն ու անդորրութիւնն ապահովցնելու համար.

Պ. Կէննատիոսի նախորդն՝ Պ. Ժան Կրիբարի, որ Սոֆիայի հիւպատոս անուանած է, մէկ քանի օրէն իւր նոր պաշտօնատեղին պիտի ուղևորի Աթէնքի ճամբով.

ԹՈՒՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Կ. Պոլսոյ մէջ թղթի գործարանի մը հաստատման օսմանեան ընկերութիւնը որ կազմուած է ի Լոնտոն, ընդարձակ հիման մը վրայ գործի ձեռնարկած է, 325,000 ոսկւոյ դրամագլխով, որ երկու կարգ բաժնեթղթոց բաժնուած է, ի բաց առեալ 1000 ոսկւոյ գումար մը որ հիմնադրաց յատկացեալ 100 բաժնեթուղթ կը ներկայացնէ. Նորակազմ ընկերութեան կ'աջակցի Անգլիոյ «Capital and Counties Bank» դրամատունը որոյ տնօրէններէ մին կ'անդամակցի ընկերութեան վարչական խորհրդոյն. Կեդրոնական մասնախումբը կը կազմեն Օսման պէյ, Ն. Վսեմութեան տպարանի տնօրէն Ճէվատ պէյ, Պ. Լտվին Բիրս, Պ. Թ. Թըքըր և Պ. Ժ. Թօմբսըն. Ընկերութեան Կ. Պոլսոյ տնօրէնը պիտի ըլլայ Պ. Թըքըր և Լոնտոնի տնօրէնը Պ. Հէրպէրթ Սբայսէր. Ընկերութիւնը կազմուած է՝ Թուրքիոյ մէջ թուղթի պատրաստութեան մենաշնորհի արտօնութեան մը վրայ (ի բաց առեալ արդէն իսկ գըտնուող գործարանները և արհեստանոցները). Վաճառողն է Պ. Հէրպէրթ Սբայսէր որ յանձն կ'առնու շինել և կազմակերպել գործարանն, ի փոխարէն ընդունելով 275,000 ոսկի, 50,000 ոսկին բաժնեթղթով և մնացեալը կանխիկ դրամով.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐՔ

Թուրքիոյ և Անգլիոյ միջև կնքելի առևտրական դաշնագրոյն համար կարգեալ պատուիրակք նախընթաց օր առաջին անգամ ըլլալով պաշտօնական գումարում մը ունեցան անգլիական դեսպանատան մէջ. Բ. Դրան պատուիրակներն են Վսեմ. Յարութիւն փաշա Տատեան և Վսեմ. Պետրոս էֆէնտի Գույումճեան. Իսկ Անգլիոյ պատուիրակներն են՝ բրիտանական հիւպատոս Պ. Բէնչ, և Պ. Ֆիձճէրալտ Լօու՝ առևտրական կցորդ Ռուսիոյ, Պարսկաստանի, և Թուրքիոյ ասիական գաւառաց. Յաջորդ գումարումը տեղի կ'ունենայ վաղը, շաբաթ, ի Բ. Դուռն.

ՅԱՖԱ-ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Յաֆայէն ուղղեալ հեռագիր մը կը ծանուցանէ թէ երէկ, ի ներկայութեան կառավարական պաշտօնէից և այլոց, հանդիսաւոր կերպիւ տեղի ունեցեր է երկաթուղւոյ շինութեան նախնական աշխատութեանց սկզբնաւորութիւնը.

«ԷՐԹՈՂՐՈՒԼ» ՄԱՐՏԱՆԱՒԸ

Էրթողրուլ մարտանաւին հրամանատար Օսման փաշայի կողմէ մարտ 16 թուականաւ առ Ծովային Նախարարութիւնն ուղղեալ հեռագիր մը ծանուցած է թէ մարտանաւը Սինկափուրէ ճամբայ ելնելով Սայկոն (Թոնքին) ժամաներ է, թէ օդն այնչափ աստիկ չըլլալով, միշտ հիւսիսային հովեր կը փչեն և թէ մէկ քանի օրուան մէջ պէտք եղած ածուխն առնելէ յետոյ իւր ճամբան պիտի շարունակէ.

ՊՈԼՍՈՅ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ

Զապթիէ կիմանայ թէ ձեռնհաս իշխանութիւնն որոշած է արգելուլ մուրացկանութիւնն, և այն անոք անօգնական այրերն ու կիներն, որք միմիայն մուրալու համար այլ և այլ կողմերէ մայրաքաղաքս եկած են, իրենց հայրենիքները վերադարձնել. Նոյնպէս պատսպարան մը շինել այն կարգի անձանց համար, որք կոյր և խեղանդամ ըլլալով, թշուառութեան մատնուած են.

Ձեռնհաս իշխանութիւնք կը խորհրդակցի հաւաքելու համար այդ կարգի պատսպարանի մը կառուցման անհրաժեշտ եղող ծախքը. Նոյնպէս կանոնագիր մը կը պատրաստէ պատսպարանի յանձնանձումն ինչպէս նաև մուրացկանութեան բացարձակ արգելքն ապահովելու համար.

Զօրրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Րիզէի երկրորդական վարժարանին գեղագրութեան ուսուցիչ Սալիմ էֆէնտիի.

—Արտաքին գործոց նախարարութիւնը ծանուցած որոց որ անկ է թէ ի Փարիզ հրատարակեալ Իլլիւսթրասիօն պատկերազարդ հանդէսին ի Թուրքիա մուտքը, որ ասկից առաջ արգիլուած էր, արտօնուած է.

—Բալլի անուն վաղեմի չարագործն, որ անցեալ գիշեր Կալաթա Սէրայի բանտէն փախած էր, երէկ ձերբակալուեցաւ Էյուպի մէջ.

—Հեռագրական տեղեկութեանց համաձայն երէկ ի Բեգրօպուրկ ջերմաչափը զէռօյէն վար 4 աստիճան ցոյց տուած է, ի Վիէննա զէռօյէն վեր 2 աստիճան, ի Փարիզ՝ 3, յՍտեանա՝ 4, ի Տրապիզոն՝ 11, ի Զմիւռնիա՝ 13, ի Պէյրութ 16 և ի Պաղտատ 22. Այս վերջին քաղաքին մէջ տասն և չորս ժամէ ի վեր անձրև կը տեղայ.

—Ոստիկանութիւնն երէկ հինգ չարագործներ հեռաւոր վայրեր աքսորեց Սէլանիկի ճամբով.

—Երէկ առաւօտ, ժամ 4ին միջոցները, գողութեան յանդուգն փորձ մը կատարուեցաւ ի Բերա. Լաւ հագուած երեք յոյն երիտասարդներ Թագսիմի աղբիւրին դէմ գտնուած ճաշարանը մտան, որ Ճօրճի անուն մարդու մը կը պատկանի, և առանձին ճաշելու փափագ յայտնելով, վերնայարկի խուցն ելան, ուր իրենցմէ զատ ո՛չ ոք կը գտնուէր. Մինչ ճաշարանի սպասաւորք վարն զբաղած էին այդ «պատուաւոր» յաճախորդաց սեղանին խորտիկները պատրաստելու, վերն երեք երիտասարդք զբաղած էին ճաշարանապետին դարակը խորտակել երկաթեայ ձողով մը զոր իրենց հագուստին ներքև պահած էին. Բարեբաղդաբար սպասաւորաց մին սպասուածէն աւելի շուտ վեր ելլելով, տեսաւ որ երեք երիտասարդք փոխանակ իրենց ստամոքսին՝ գրպաննին լեցնելու եկած էին. Ուստի վար վազեց և իմացուց ճաշարանապետին որ փութաց լուր ղրկել Թագսիմի պահականոցը. Գողերը փախչելու ճամբայ չի գտնելով, շատացած էին երկաթեայ ձողը պատէն նետել, ուստից գտնուեցաւ ի վերջոյ. Ոստիկանք խսկոյն հասնելով, վեր ելան ու ձերբակալելով երեք փայլչագգեստ երիտասարդները, ուղղակի Թագսիմի պահականոցը տարին և անտի Կալաթա-Սէրայի ոստիկանատունը.

—Երիտասարդ մը որ անցեալ շաբթու գողերէն հալածուած էր արդէն, չորեքշաբթի օրը Թաղապետական պաշտօնատան շրջակայ փողոցներէ միոյն մէջ պաշարուեցաւ երկու չարագործներէ որք ժամացոյցն ու շղթայն ինչպէս նաև 16 ոսկի արժողութեամբ մատանին յափշտակեցին. Երիտասարդը թէև փորձեց դիմադրել, սակայն գողերը դաշոյն մը բռնելով կոկորդին, այս սպառնալեաց առջև լուեց և թոյլ տուաւ որ իրենց կողոպուտը կատարեն. Հակառակ պարագային մէջ՝ փոխանակ ժամացոյցին ու մատանիին, կրնար կեանքը վրայ տալ.

—Ներքին գործոց նախարարութիւնն, ըստ առաջարկութեան բժշկական վարչութեան, հրահանգ ուղղած է ամեն կողմ տեղեկագրելու համար թէ Թուրքիոյ այլ և այլ կողմերն երևան ելած պաճարախտի սկզբնաւորութեան թուականէն մինչև 1305 տարւոյ փետրվարի վերջն, ո՞րչափ անասունք կը գտնուէին և ո՞րչափն զոհ գնացած են այդ ախտին, թէ այդ ախտ ի՞նչպէս երևան ելած և ի՞նչ պատճառներով ճարակած է, թէ ախտն ո՞ր տեղերու մէջ անհետացած է և այժմ տակաւին ո՛ր տեղերու մէջ կը գտնուի և թէ մինչև ո՛ր աստիճան կը ճարակի.

—Երէկ իրիկուն եւրոպական կառախումբով մայրաքաղաքս ժամանեցին ութսուն չափ հունգարացի գրօսաշրջիկներ, որք Օթէլ տը Բէլժ իջևանեցան. Ասոնց մէջ կան կոմս Զիչի, Պառոն Նիարի և ժալպէք ընտանիքը.

—Կրթական նախարարութիւնը տեղեկութիւն ուզած է Հալէպի կուսակալութենէն թէ նահանգին մէջ քանի՞ գիւղեր կան որք քսանէն մինչև քառասուն տուն կը պարունակեն և վարժարան ու մզկիթ չունին և թէ վարժարանի ու մզկիթի շինութեան համար ո՞րչափ ծախք կը հաշուուի.

—Հալէպի Էլպէսթան գաւառակին մէջ հետևեալ ցաւալի դէպքը պատահած է, արդիւնք յուսահատ սիրոյ. Երիտասարդ մը, որ իրեն դրացի ոստիկան զինուորաց յիսնապետի մը աղջկան սիրահարած էր, տեսնելով որ չպիտի յաջողի միանալ իւր սիրուհւոյն, յուսահատելով, հետևեալ եղերական միջոցին կը դիմէ. Այդ գաւառակին մէջ սովորութիւն կայ որ երբ տուն մը հրանիք կատարուի, այդ տան կողմէ շաքարեղէնք ղրկուին դրացի տուներուն. Երիտասարդն օգուտ քաղելով այդ սովորութենէն, շաքարեղէններ կ'առնու և թոյն խառնելով, կը ղրկէ զայնս իւր սիրուհւոյն տունն, իբրև թէ հարսանիքէ մը ղրկուած. Աղջկան ամբողջ ընտանիքն այդ շաքարեղէններն ուտելով կը թունաւորուին, սակայն ասոնցմէ միայն աղջիկն ու չորս տարեկան տղայ մը կը մեռնին և միւսները կ'ազատին. Տեղական կառավարութիւնն իմանալով կը ձերբակալէ երիտասարդը.

Թ. ՈՒԻԼՍԸՆ ՇՈԳ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մայրաքաղաքիս Ուիլսըն շոգենաւային Ընկ. դարձեալ սկսած է շարունակել Հըլի ճամբով Մանչէսդրի և Կ. Պոլսոյ միջև ապրանաց փոխադրութիւնը. Ամիսը երկու շոգենաւք պիտի մեկնին Հըլէ և ...չէ Պոլիս պիտի գան առանց ուրիշ որ և է նաւահանգիստ հանդիպելու ապրանաց համար. Սև ծովու կամ Միջերկրականի բոլոր նաւահանգստաց համար, նոյնպէս Պուլկարիոյ բոլոր քաղաքաց համար փոխադրութիւնք (աքթարմա) կը կատարուին ամենայն արագութեամբ և առանց որ և է ծախուց.

Աւելի մանրամասնութեանց համար պէտք է դիմել առ Ընդ. գործակալս վերոյիշեալ Ընկ. (Տե՛ս հրդ երես).

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

ԲԱՌԱՐԱՆ

ՖՐԱՆՍԵՐԷՆ ՀԱՅ ԱՇԽԱՐՀԻԿ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Հրատարակուեցաւ 31րդ թերթն որ կը հասնի մինչև Guichet բառը.

ԹՐԱՄՈՒԷՅԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Կ. ՊՈԼՍՈՅ

Համայնի ոսկի դրամով

1890 Մարտ 1էն Փետր. 31

		Օրական	Ամսական
Պէշիքթաշի գիծ		5,582.22	173,052.—
Աքսէրայի	»	5,031.92	155,987.50
Շիշլիի	»	5,685.29	176,244.—

Կ. Պոլիս, 2 Ապրիլ 1890

Ընդհ. Տնօրէն
Ա. ԹՐԻՒԼԷ

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

Փարիզ, 3 ապրիլ.

Թան Պերլինի Դեսպանախորհրդոյն վրայ խօսելով, կ'ըսէ թէ տուած արդիւնքը գոհացուցիչ են մարդասիրաց համար և սփոփիչ՝ իմաստասիրաց համար.

—Ներքին գործոց Նախարարը գաւառապետաց հրաման ղրկեց որ մայիս 1ին հասարակորդեան ո՛և է ցոյց չթոյլատրեն.

—Ի Նանսի չորս կարգ զինուորական տազաւարներ հրոյ ճարակ եղան.

—Պրազիլիոյ Տոմ Փետրօ կայսրը մերժեց Պրազիլիոյ առժամեայ կառավարութեան դրամական առաջարկներն.

Քէօլն, 3 ապրիլ

Քէօլնիշէ Զայթունկ ապրիլ 1 թուով Մոմպասայէ կ'իմանայ թէ Էլէրն ուղևորն, որ Քիլիմանճարօ կ'երթար, պատահած է Տքթ. Փեթերսի, որ իւր ուղեկցին՝ Թիտէման տեղակալին և 40 բեռնակրաց հետ քաջառողջ է.

Զանզիպար, 2 ապրիլ

Էմին փաշա Գերմանիոյ ծառայութեան մտաւ. Ապրիլ 20ին Նիանզա պիտի երթայ.

Պէնի-Շիրի արաբ հրոսապետն հաշտութիւն կնքեց.

Միւնիխ, 3 ապրիլ

Պաւիերայի իշխան-խնամակալը կըրօնային մասնաւոր ընկերութեան բաժանդակ իրաւունքները տուաւ Հին Կաթոլիկներուն.

Աթէնք, 3 ապրիլ

Գարնան կատարուելիք ռազմափորձերն աշնան թողուեցան.

Բեդրօպուրկ, 3 ապրիլ

Քրոյ կը ծանուցանէ թէ Հրէից իրաւունքները սեղմող կանոնադրու-

թիւնք պիտի գործադրուին նախ ի Բոլոնիա, և առ այս յատուկ ծրագիր պիտի մատուցուի Ռուսիոյ Կայսերական Խորհրդին.

—Ցունաստանի Օլկա թագուհին աստ հասաւ.

—Օտար լրագրաց ոմանց հրատարակութեանց հակառակ, ստոյգ աղբիւրէ կը հաւաստեն թէ Զարը քաջառողջ է.

Լոնտոն, 3 ապրիլ

Պահպանողական ընտրելի Պ. Կարտընըր երեսփոխան ընտրուեցաւ 1522 ձայնով, մինչ Կլատստոնեան ընտրելի Պ. Կրէնֆէլ 927 ձայն միայն շահեցաւ.

Մատրիտ, 3 ապրիլ

Զօրավար Սալձետօ պատասխան մը ուղղեց առ զօրավար Տապան, հաւանելով նորա յայտնած հակառակամարական տեսութեանց. Բոլոր լրագիրն այդ նամակը հրատարակած ըլլալով, պատերազմական գործոց նախարարը խցարգելութեան դատապարտեց Սալձետօ զօրավարը.

—Խնամակալ-թագուհին ոտքին ոսկերաց խախտումէն կը նեղուի.

Վիեննա, 3 ապրիլ

Թէհրանէ կը գրեն առ Բոլիթիշէ Գօրէսբոնտէնց թէ Պարսկաստանի և Ռուսիոյ միջեւ կնքեալ պայմանագրութիւն մը՝ ռուս շոգենաւուց արտօնութիւն կուտայ Ինուրտաղի ծոցը մտնելու. Այս պայմանագրութեամբ Պարսկաստան պարտաւոր է Ռուս կառավարութեան ծանուցանել բոլոր երկաթուղիները զորս մտադիր է շինել կամ ի գլուխ հանել երկու տարիէն, այսինքն Արտալիպ-Աստարայի, Րէշդ-Թէհրանի և Խորասան-Ասխապատի գիծերը.

—

ԱՐԵՒԵԼ. ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

Բարիզ, 3 ապրիլ

Մինչեւ ցարդ Տահոմէէն կառավարութեան ստացած լուրերը ծանր մտահոգութիւն չեն պատճառեր, բայց եթէ կացութիւնը ծանրանայ, Նախարարութիւնը չպիտի վարանի բաւական մեծ վարկ մը խնդրելու, զինուորական արշաւանքի մը ծախքերն հոգալու համար.

Ստոյգ աղբիւրէ առնուած տեղեկութեանց համաձայն, գաղթականութեանց պաշտօնատուն խորհրդականութիւնը կատարելապէս անկախ նախարարութեան մը պիտի վերածուի ընդհուպ.

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 23 մարտ

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ		
3 ամիս Լոնտրայի վրայ (Պանքայի)		109 7/8
3 » » » (վաճառ.)		109 1/2
3 » Բարիզի » (պանքայի)		22 92 1/2
3 » » » (վաճառ.)		23
Օսմանեան Քօնսոլիտէ		
Երէկ երեկոյ գոց. (Միաց. Ն. Սէրի		18 31
Զօրայոյն գոցուելէն վերջը	»	19 34
Բերայի մէջ	»	20 12
Առաւօտուն բացուելու	»	20 9 1/2
Կէս օրին	»	20 9 1/2
ԻՍԹԻՆՐԱԶԸ ՏԱՀՒԻԼ		
Երէկ երեկոյ		54 20
Այս առաւօտ		54 10
Կէս օր		54 10
ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՅ		
Փոխառութիւն	A. Սէրի	39 3/8
»	B. »	24
»	C. »	20 12
ԲԱԺՆԵՏՈՄՍ		
Օսմ. Թէ Ճէնէրալ	Անգլ. Լր.	4 29
Գրէտի Ճէնէրալ	Օսմ. »	8 30
Պանք տը Գօնս	» »	7 14
Սօս. Շամէ է վոյէօր	» »	4 35
Թրամուէյ	» »	480
Ռումէլի երկաթուղի	Ֆր.	73 25
Օղլիկատիօն տը Բրիօրիթէ	»	— —
Բամպէթուզի Լավրիոն	Գ. Կ.	117
ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ		
Օսմանեան ոսկի	Պրլ. ...	100
20 ֆրանքնոց	» ...	87 30
Անգլիական ոսկի	» ...	110 14
Իմբերիալ	» ...	90 20
Գրիմից	» ...	51 12
Բուլղի թղթադրամ	» ...	8 35
» արծաթ	» ...	77
Մէճ. արծաթ. (տարր)	» ...	108 3
Վեցնոց	» ...	108 20
Հինգնոց	» ...	108 20
Մեթալիք	» ...	101
Թաղիլէ	» ..	10 20

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Բարիզ, 3 Ապրիլ, ժամ 3 վայր. 42 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	88 52 1/2
» » 4 1/2 %	106 45
Օսմանեան քօնսոլիտէ Սէրի Դ.	18 35
Օսմանեան երկաթուղի	73 25
» Րէժիի բաժնեթուղթք	240
Պանք Օթոման	539 75
Գրէտի Լիոնէ	712 50
Իտալական Ռանթ 5 %	92 50
Հելլենական 5 %	459
Բրիօրիթէ Թիւրք	495
Եգիպտական միացեալ	480 62 1/2
Պանք տը Բարի	783 75
Օսմ. մաքս. արժէթուղթ	428 75
Սուէզի ջրանցք	2302 50
Սպանիական արտաքին	73 7/16
Զէք Լոնտրայի վրայ	25 19 1/2

Լոնտոն, 3 Ապրիլ, ժամ 6 վայր. — երեկոյ

Անգլ. քօնսոլիտէ		98 1/4
Օսմ. »	Սէրի Դ.	18 5/16
» »	» Ա.	40 1/2
» »	» Բ.	տընընթ.
» »	» Գ.	»
Փոխառութիւն 1877		»
Պանք Օթոման		»
Եգիպտական միացեալ (Իւնիֆիյէ)		95 5/16
» առանձ. (բրիվիլէժիէ)		105 3/8
Տայրա Սանիէ		84 1/4
Տօմանիալ (փոխառ. Ռօչիլտ)		104 1/2
Հելլենական 5 %		90 1/4
Մոնոբոլ »		74 1/2
Ռուսական 1889		94 1/4
Փոխանակութիւն Բարիզի վրայ		25 19 1/2

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 3 Ապրիլ, ժ. — վ. — երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	88 51
Օսմանեան քօնսոլիտէ Դ.	18 35
Օսմանեան երկաթուղի	— —
Եգիպտական միացեալ	481 56

Վիեննա, 3 Ապրիլ, ժամ — վայր. —

Օսմանեան երկաթուղի	34 30
» Րէժիի բաժնեթուղթք	109
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	119 85

Պէրլին, 3 Ապրիլ, ժամ — վայր. —

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 35
Ռուսաց թղթադրամ	221 1/4
Օսմանեան երկաթուղի	78 10
Օսմանեան քօնսոլիտէ Սէրի Դ.	18 25

ՆԱՐԵԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Իմացեր էի թէ ամենայն հինգշաբթի արտասանական վարժողութեան տեսակ մը հանդէս կը կատարէ Նարեկեան դըպրոցն, որոյ չէնքի անչքութիւնն միայն խոսակցութեան յաճախակի առարկայ մ'է, առանց երբե՛ք նկատի առնելու նորա աւելի կարեւոր մէկ պարագայն. այն է՝ կրթական կազմակերպութիւնը. Արուեստագիտական վարժարանի բեղնաւոր արդիւնացուցմանկէն յետոյ, փափաքելի էր աչքէ անցունել նաեւ Բերայի արական սեռի դաստիարակութեան վիճակն, ուստի սոյն հանդէս պատեհ առիթ մ'է ըստ ինքեան.

Դպրոցային ճառախօսութեանց ուսուցումն այնպիսի անախորժ և մինչեւ իսկ ծաղրելի զգացում յառաջ բերած է այլ եւս շատ մարդոց մէջ, իւր անմիտ եւ իմաստակ հանգամանքներով որ, կը դըժուարանայի վստահելի հաւատքով ունկընդրել Նարեկեան վարժարանի այդ արտասանութեան հանդէսին, այլ սակայն քաղցր եւ նոյն իսկ հոգեկայլ տպաւորութեան ներքեւ մեկնեցանք անոր սակաւաթիւ հանդիսականքս. Արտասանելի նիւթերն ամենայնիւ մատչելի լինելով աշակերտաց թէ՛ մտքին և թէ՛ հոգւոյն, միանգամայն զգալապէս կարող են նպաստել նոցա զարգացման եւ վստահութիւն ներշնչել իրենց ինքնութեան, որովհետեւ այս շրջանէն սկսեալ աշակերտք իրենց հասկացողութեան համաչափ նիւթերու վրայ ճառելով աստիճան առ աստիճան, ապագային այլ եւս թէ՛ օրինաւոր խօսելու կը վարժուին եւ թէ մանաւանդ խօսելու կատարեալ անձնավստահութիւն կ'ստանան.

Ժամ 6½ էր երբ ներս մտանք Նարեկեան դպրոցն, որ հակառակ իւր հընաչէն և անշուք վիճակին կատարելապէս մաքուր է եւ յարմարեալ դասարանական դրութեան, որ դժբաղդաբար կը պակսի Կ. Պոլսոյ շատ մը թաղային վարժարանաց մէջ. Բոլոր տղայք համախմբըւած են սրահն եւ կ'երգեն ախորժալուր եւ մինչեւ իսկ արուեստագիտական ընտիր ներդաշնակութեամբ. Անընդմիջաբար առաջին դասէն սկսեալ մինչեւ վերջինն մէկ մէկ աշակերտ արտասանութիւններ կ'ընէ եւ ուսանողի դասարանական բարձրացման աստիճանաւ, կը բարձրանան նաեւ արտասանելի նիւթերու աստիճանն. Վերին կարգի տղայք այլ եւս սովորաբար կ'արտասանեն ինքնուրոյն գրուածներ.

Սոյն հանդէս տեւեց աւելի քան մի ժամ, որմէ յետոյ Հայր Դաւիթ Նազարէթեան ընտիր բացատրութեամբ նշանակեց այդ նոր ձեռնարկի օգտակարութիւնն եւ մեծ շնորհակալեաց արժանի համարեց ուսումնարանի Տնօրէն Միլտոն էֆ. Սերոբեանի ջանքերն ի մասին այսպիսի բարեփոխութեանց. Երկու տարի առաջ պատեհութիւն ունեցած էի այցելել այդ վարժարանն, երկու տարուան միջոցին շատ զգալի յառաջդիմութիւն գործած է ամեն մասամբ. բաց ատոր Վեհմ. Նուրեան էֆէնտիի գնահատելի բարեկարգութիւններէն մին կարելի է համարել որ ամենայնիւ կը ջանայ մանկավարժական դրութիւնը հաստատել Նարեկեան վարժարանի կրթութեան մէջ. փոքր տղայք բոլորովին այդ դրութեամբ կուսանին կարդալ-գրելն եւ տարրական առարկաները, զորս կ'աւանդէ Գէորգեան ճեմարանի նախկին ուսանողներէն Պ. Գալէմքերեան.

Աշակերտաց բնութեան վրայ նշմարելի է պատշաճաւոր օրինապահութիւն եւ մաքրութիւն և որչափ կարելի եղաւ տեղեկանալ արձանագրութիւններէ եւ տեսականներէ վարժարանի յառաջդիմութիւնը գոհացուցիչ է, շնորհիւ բարւոք տնօրինութեան մը. ամենայն ամսավերջ, Գեր. Գարեգին Եպիսկ. Սրուանձտեան, Վեհմ. Նուրեան էֆէնտի, Միլտոն էֆէնտի Սերոբեանի եւ բոլոր ուսուցչական խմբի հետ միասին ի նկատ կ'առնուն աշակերտաց ամսական յառաջդիմութեան չափն եւ անոր համեմատ բանիւ եւ գործով կը քաջալերեն զնոսա. Տ. Պ.

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԱԽԱԼՑԽԱՅԻ

Գ.

ԱԽԱԼՑԽԱ 22 յունուար

Քաղաքիս մասին այսքան տեղեկութիւններ տալէս զկնի, այժմ իջնենք դէպ ի գաւառ.

Ախալցխայի գաւառը բաժանուած է չինական հասարակութիւնների. ամէն մի հասարակութիւն ունի 7-15 գիւղ, որոնք կառավարվում են հասարակութիւնից ընտրուած տանուտէրներով (ստարշինայ) և իւրաքանչիւր գիւղ՝ իւր դատաւորներով. Գիւղային մանաւոր դատերը վճռում է գիւղական դատաւորը, եթէ չ'համաձայնեցին կողմերը՝ դիմում են տանուտէրին. վերջինէս զկնի միայն դիմում են քաղաք հաշտարար դատարանի. Տանուտէրի իրաւունքն ընդարձակ է. նրա տուած վճիռը հազիւ է փոխուում. բաց ի մասնաւոր դատերից, տանուտէրն է հաւաքում հարկերն և ներկայացնում գանձարանին. նա է սահմանում և հերթ-ով բաժանում իշխանութեան պահանջած մշակներ ճանապարհներ յօրդելու, զօրքի ծանրութիւնը տեղափոխելու, (յայտնի վըճարով), նոր հրահանգներ տարածում հասկացնում իր օգնականների և դատաւորների միջոցով. Հողային վէճերի, մասնաւոր կալուածատէրերի և գանձարանի հետ և այլ դժուար հանգամանքներում իշխանութիւնից կարգուած կայ և հաշտարար Միջնորդ, որը բոլոր գաւառի վերայ հսկում է օրինաւորութիւն չ'լինելու համար. Գաւառի գիւղացիք մեծ մասամբ Տաճիկներ են, տասն և մէկ գիւղ Հայ-կաթոլիկ և եօթն գիւղ Հայ-լուսաւորչական, կան և Վրացի, Քուրդ եւ Թիւրքմէն. Հայ-լուսաւորչական գիւղերից հարուստ Մուղրութում և Ածխուրում կան ծխական դպրոցներ, միւսներն դպրոց չունին, բայց ամէն գիւղ ունի իւր եկեղեցին և քահանան. Մի քանի կենդրոնական գիւղերում իշխանութիւնից բացուած կան միադասարանեան և երկդասարանեան տարրական դպրոցներ. Գիւղացիների պարապմունքն է բաց ի երկրագործութիւնից մեծ մասամբ այգեգործութիւն, (ինչպէս վերեւն յիշուած է). մի քանի գիւղերի բնտիր մեղրը պատմական նշանակութիւն ունի, զ ժրադաբար գիւղացիք շատ փոքր ուշքեն դարձնում այդ արդիւնաւէտ ճիւղի վերայ. Ընդհանրապէս, Ախալցխայի գաւառը շրջապատուած լինելով հասարակ անտառներով, շատ նպաստաւոր է գիւղացիների համար, որոնք, որոշեալ ժամանակամիջոցներում փայտ կտրելով, ածուխ պատրաստելով բերում են քաղաք վաճառելու թէ փայտը և թէ ածուխը. դարնան սկիզբին էլ հազարաւոր գերաններ միմեանց շղթայելով (տասն կամ տասներկու հատ) սահեցնում են Կուր գետով դէպ ի Տփխիս.

Բայց Ախալցխայի իսկական հարըստութիւնն Աբասթումանն է, որի մասին դեռ եւս գաղափար չունին կազմած շատերն և չ'գիտեն ի՞նչ տեղ է. ճանապարհների դիւրին և արժան հաղորդակցութիւնը շատ յարմարութիւններ է ընծայում Աբասթումանն այցելողին. Բաթումից եկողն ուղղակի նոր շինուած շոսէով (խճուղի) կարող է հասնել Աբասթուման մէկ օրում. Բաթումից մինչեւ Աբասթուման 60 վերստ է (մօտ 65 քիլոմետր). իսկ այցելուն եթէ կամենում է շրջանային ճանապարհորդութիւն անել, տեսնել Քութայիս, Բորժոմ, Ախալցխա եւ ապա Աբասթուման, այդ էլ նոյնպէս հեշտ է և ոչ ծանրագին. Երկաթուղին դուրս գալով Բաթումից առաւօտեան ժամն ութին (ալաֆրանկայ), կէս օրից զկնի ժամը վեցին հասնում է Միխայէլովօ կայարանը, ուր բացի պոստային կառքերից, միշտ ճանապարհորդների սպասում են մասնաւոր անձերի տասնեակ ֆայետոններ. անմիջապէս ֆայետոն նստելով կէս գիշերին հասնում է Ախալցխա. եթէ ճանապարհորդը չէ ցանկանում գիշերել Ախալցխայում, ֆայետոնը երկու ժամուան հասցնում է Աբասթուման, ուրեմն Բաթումից մինչեւ Աբասթուման կարելի է ճանապարհորդել 18 ժամում. Բայց մենք չ'ստիպեմք ճանապարհորդին աճապարելու. ուղեցոյց լինենք և հանգիստ հասցնենք իւր ժամատեղին. Աբասթումանի, այսպէս ասած, ծուծը ամառն է. ամառն ուշ է մեռնում մեզանում. Հազիւ ժամը 8ին ճաշից զկնի, ճրագներ են վառվում. ուրեմն, մենք միջոց ունինք լուսով ցերեկով ճանապարհորդելու Միխայէլովից դէպ ի Բորժոմ, որ ընդ ամէնը 27 վերստ է (վերստը փոքր ինչ աւելի է քիլոմետրից), Բորժոմից Ախալցխա 46 վերստ և Ախալցխայից Աբասթուման 25 վերստ. Կայարանից մենք վերցնենք մասնաւոր ֆայետոն, այն պայմանով, որ գիշերենք Բորժոմում, երկրորդ օրը ճաշենք Ախալցխայում և ընթրենք Աբասթումանում. Կայարանից կառքը սահում է գլգլալով հարթ հաւասար խճուղու վերայով. ընդարձակ դաշտ. հեռուն երկու կողմից բարձրանում են լեռներ սաղարթախիտ անտառներով, կանաչ, մշտադալար եղեւին, մայրի և սոճի ծառերով. 3/4 ժամից մենք մտնենում ենք Կուրին և աջա մնում անուշ և զով հովիտի կիրճը. այժմ նայիր վերեւ, հազիւ, կապուտակ երկինքն երեւում է, իսկ դուք զմայլեցէք բնութեան հիասքանչ տեսարաններով. դետն երբեմն գոռումէ զարնուելով ապառաժներին և քարերին, երբեմն սահումէ հանդարտ և սիգաճեմ. գետի վերայից սոէպ տեսնումէք գերաններից շինուած սահող լաստեր, որոց վերայ Իմէրէլներ, ղեկավարելով լաստը, քշումեն ջրի հոսանքով դէպի ներքեւ. իրանց ազգային «Հարալոն» գեղգեղելով. որքան կամենումէք նայեցէք դէպի վերեւ, աջ և ձախ հեղասիւղ անտառ, որի անդորրութիւնն երբեմն վրդովումեն թեւաւոր թըռչնիկները, ճռուողելով, թռչկոտելով մի ծառից դէպի միւսը, մի թփից մի այլն իրանց անբաժան զուգակիցների հետ. Քիմքդ յայնանումէ, երեսդ զըւարթանում, շրթունքդ ժպտում, աչքերդ խոսում, քիչ է մնում հոգեզմայլութեան արցունք թափես, այսպէս է շարունակվում մինչեւ Բորժոմ. (Բորժոմը՝ նախկին փոխարքայ Մեծ իշխան Միխայէլ Ալեքսանդրովիչի ամառանոցն է, ուր կան սառն և տաք հանքային ջրեր). Բայց ես գիտեմք հեռացնումեմ Բորժոմից, (որովհետեւ առանց այն էլ նամակն երկարեց), մտադիր եմ հասցնել մինչեւ Աբասթուման, վերադարձից կարող չէք ուղեցոյցի, կը տեսնէք անձամբ ամէն ինչ և գաղափար կը կազմէք. Նոյն հովտով, նոյնպիսի տեսարաններով մենք մտնենումենք Ածխուրին, ուր դեռ չըհասած մենք անցկենալու ենք երեք վերստ, ճանապարհի երկու կողմից, մըդաստու պարտէզների մէջից. Ամառը բնութեան ամենահարուստ ժամանակն է. դեղձը, ճանճուրը դեղնած կարմրած. սալթ նման դեղին կեռասը, ժպտող հոնը, ոսկեգոյն, կարմիր ներկած բալը չտեսի ուղղակի յորձանքներն են վազեցնում շրթունքներից. իսկ, ի՞նչպէս ներկայացնել տանձն ու խնձորը, որոնք ծառապտուղների մէջ արքայավայել տեղն են բռնում, ծառերի հաստ ճիւղեր խոնարհած մինչեւ գետին, կարծես խոնհոնութեամբ առաջարկելու լինին «մօտեցիր անցորդ, հոտոտիր, պաչիր իմ գողտրիկ, հուր հրատի կարմիր կանանչ թշիկներս, ճաշակիր և տես և այնուհետեւ առանց չափազանցութեան գնա պատմիր եւ երգիր քեզ տուած հրապոյրներս, համն և հոտս, ժպիտս և ծիծաղս». Ածխուրից փոքր ինչ հեռանումենն անտառները և մենք երկու ժամում հասնումենք Ախալցխայի քաղաքամիջի մեծ կամուրջը. դէպի ձախ նոր քաղաքամասն է տանում, իսկ դէպի յաջ Աբասթուման գնալու ճանապարհի շարունակութիւնն է. լաւ է մենք շարունակենք ճանապարհ. արդեօք չ'կայ նայիր և քաղաքին. հեռուից, բարձր, բարձր սարահարթի ճակատին կոթողի պէս կանգնած է մի հսկայ շինութիւն հինգ գմբէթներով, դա Ս. Վարդանանց եկեղեցին է, նրա քովանքին կպած է մի այլ հայարկանի պալատ, դա էլ երբեմն Վարդանանց ուսում նարանն էր. այդ շինութիւնն և եկեղեցին կառուցանողը հանգուցեալ բարերար Վարդան աղայ Վարդանեանցն էր, շինութիւնն էլ նուիրուած է եկեղեցուն. Նայիր քաղաքին, որը քողարկուած է պարտէզներով. այդ դրախտանման պարտէզներից, բուսական աշխարհից աղօտ նկատվումեն բնակութեան տները, ծառերը հովանաւորել են. բայց աջա ներքեւ, ուր քաղաքի կենդրոնն է, թէպէտ նոյն քան ծառազարդ չէ, սակայն արեւի ճառագայթների տակ փայլումեն կարմիր և կանանչ թիթեղեայ ծածկոցները, եկեղեցիների գմբէթներն, որոց մէջ Ս. Փրկիչն ամենից պատուաւոր տեղն է բռնած. կառքը հեռանումէ և ծածկում մեզանից քաղաքի մանրամասն տեսարանները.

Փոքր ինչ ընկղմինք կառքի փափուկ բարձերին. տեսողութիւններիս հանգիստ տանք, որոնք բաւական յոգնած են այժմ. բայց չի տեւէ մեր հանգիստը, մի կամ երկու ժամ, եւ աջա, Աբասթուման գետակի խոխոջիւնը, անտառի քնքուշիկ շվիւոց, մեղմ եւ բարակ հով. սթափեցնումեն ձեզ, բաց էք անում աչքերդ, եթէ երեւակայութիւնդ ձեզ չխաբէ, կարծելու էք թէ նոր էք մտնում Բորժոմի հովիտի կիրճը. բայց չէ, նայեցէք վերեւ անտառին, այստեղ ծառերը միատեսակ են—եղեւին և մայրի (չամ). այստեղ այն թացութիւնը չէք զգում ինչ որ Բորժոմում. այստեղ սարահարթն աւելի անձուկ է, տափարակը քիչ. ծառերն աւելի խիտ. գետակը մօտ. ջուրն այնքան վճիտ է, որ եթէ մի լիրա ձգէք մէջը, խոնարհեցէք և անմիջապէս առանց որոնելու վերցրէք. համարձակ, փոքրիկ ձկնիկները խայտումեն, բայց չէք կարող խաբել, նոքա ապաստարան ունին. Շինութիւններն սկսվումեն, խայտաճամուկ ամարանոցներն սքօղուած են ծաղիկների թուփերով, գոյն գոյն ֆանտաստիկական վարագոյրներով. Նայի՛ր դէմուդէմ. աջա եւայի դրատերքը, քնքոյշ օ, խորդներ, տիկիններ իրանց մանկիկներով, քրքիջներով աղասհամարձակ խօսում, ժպտում և ծիծաղումեն. չ'սխալուիք, թատերական բեմ չէ, թափանցիկ և բարակ զգեստներին մի նայիք, ամառանոցում այդպէս պէտք է հագնել, շրջել, ժպտել, խաղալ, ծիծաղել, խօսել, վազվզել և յոգնելով նստել դալար, ծաղկաւէտ խոտի վերայ նոյնքան դալարաւանգ ծառի ստուերի տակ, հանգստանալ և կրկին վազել համեստ կերպով, առանց ուրիշին խանգարելու, նայի՛ր դէպի յաջ, աջա Եսկուլապի տաճարը, տեսէք որքան երկրպագուներ ունի, երկիւղած և ջերմեռանդ. բայց նա բարի է, եթէ վերայ վստահացողների մերասը տալիս է, նեարդային հիւանդներին, հին կաթուածահար ունեցողին, անդամալոյծին, գեղնաւորին, բէվմատիզմով տանջուողներին, ոսկրացաւ ունեցողին, Վեներայի թագաւորում վարակուածներին և որ մէկին ասեմ, միայն գիտցիր օգտուելու և բժշկուելու ձեւերը.

Այժմ նայի՛ր դէպի ձախ, այս ինչ դղորդոց, գոռում-գոչում, անդունդի դուռը խօ չէ՞ բացվում այստեղ.—ո՛չ, ո՛չ. այդտեղ տարերքի պատերազմն է.—գետակը—ջուրն, որ միշտ յաղթող է հանդիսացել, այժմ սրդողուած չանթեր է արձակումժայռերի դէմ, թէ ինչո՞ւ չէ խորտակվումիր ժանիքների առջեւ ազատ ճանապարհ տալու. բայց ապառաժն անդրդուելի է և ջուրն ահագին բարձրութիւնից թաւալվումէ ներքեւ, փրփրալից բերանով անէծքթափում ապառաժի վերայ, որ իրան չէ հպատակում. դա էլ Աբասթումանի նիագարան է.

Մենք բարձրանանք վերեւ, ուր գետակն աւելի հեղասահ է և խոնարհ. արուեստական ճեմելիք, պարտէզներ, ծաղկաստան. Բայց հեռուից Մուզայից երաժշտական ձայնը գիւթումէ ականջներս. ո՛րքան հեշտալուր և քաղցրահնչիւն. Այդ տեղից միշտ դայլայլվումէ մեղմ և անուշ երաժշտութիւն ցերեկին, իսկ գիշերներին պարահանդէս կատարվում ամառանոցի հիւրերին գիշերայ զով և անուշ զեփիւռի հետ զուարճացնելու. Մի դագարիր և մի աճապարիր, թէպէտ ամառանոցի մի ծայրից մինչեւ միւսն միւսն երեք վերստ տարածութիւն է, սակայն, ամէն մի քայլափոխումդուք հանդիպելու էք ձեզ զրաղեցնելու նոր և նոր տեսարանների. Բայց կամենաք հանգիստ առէք. աջա ընդարձակ հիւրանոցներ, կահաւորուած սենեակներ. վճարիր կառապանին 15 ռուբլի երեք անձի համար Միխայէլովից մինչեւ Աբասթուման. ընտրեցէք սենեակ 50 կոպէկից մինչեւ երեք ռուբլի օրավարձ. հանգստացէք մի գիշեր, առաւօտը կարող էք գտնել աւելի ձեռընտու բնակարան. ուտելիք և խմելիք թանգ չեն. մի բաժին կերակուրը 10 կոպէկից մինչեւ ամենաթանգը 40 կոպէկ. տնտեսել միշտ կարելի է, ամէն մի մթերք կարող էք գնել շուկայում աւելի արժան, միս, հաւ, ձու, կարագ, կաթ և այլն. իսկ երեկոյին դուք գնացէք մարգաստան զբօսնելու, ուր միշտ մեծ բազմութիւն կայ. այդ տեղ դարաւոր սոճիների, եղեւինների եւ չամերի շուաքում բաց կուրծքդ, բաց բերանդ, լայնացրու քիթդ, անսպառելի բաւականութիւն էք զգում, յագենալ անհնար է. Սառն աւազան, տաք աղբիւրներ, զուարճութեան համար ամենամեծ դիւրութիւններ, բըժշկական օգնութիւն, վերջին կատարելագործութեան հասած եւրոպական մասնագիտական բաժանմունքների լոգարաններ, տուշեր, չոգիներ, որպիսիների ամենաբարձր, կատարելագործուած յարմարութիւնները նախանձ են շարժում եւրոպական շատ և շատ ուղեւորներին և որոց բարեբար ազդեցութիւնը խոստովանումեն այժմ յայտնի եւրոպական բժիշկներ, մասնագէտներ, տուրիստներ, որոնք երբ և իցէ այցելեն Աբասթումանին.

Ա. Ա.

ԽՈՒԹՈՒԹԸ ՕՍՄԱՆԻՅԷ

Սուլթանիյէ վարժարանի գեղագրութեան ուսուցիչ Իզզէթ էֆէնտի, որ հանրածանօթ է իբրև ճարտար գեղագիր, պատրաստած է Թուրքերէն գեղագրութեան տետրակ մը՝ «Խութութը Օսմանիյէ». Այս տետրակ կը պարունակէ Թուրքերէն մէ, քանի գրերու ձևերը, որոց կցուած են նաեւ [illegible] նոր և դիւրանայից եղանակներ. Այս տետրակ խիստ օգտակար է, մանաւանդ ազգային վարժարանաց համար. Կեդրոնատեղին է Ալթղաղի Սումանիյէի գրատունն, ուր կը վաճառուի հատ 3՝ գրուշի. Վարժարանաց և մեծաքէ ծախողներու համար [illegible]. Կը վաճառուի նաեւ [illegible] Բէրայի հանդէպ գտնուած [illegible] Թղթավաճառ [illegible] էֆէնտիի և Հալէպեանցի [illegible].

Իւրաքանչիւր տետրակի վրայ Մաթպաայի Օսմանիյէի [illegible].

848 1—4

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՏԱՐՕՆԵԱՆ Ց. ՊԷՏԻԱՃԵԱՆ

ԸՆԹԱՑՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. Տարի

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Բարեփոխեալ ըստ ծրագրոյ և յանձնարարութեան Պատ. Ուսումն. Խորհրդոյ Ազգային Կեդր. Վարչութեան.

Ի ՊՈԼԻՍ

Դ. Դասու Ազգ. Նախակրթարանաց

282 ԳԻՆ 2 ԴԱՀԵԿԱՆ 5—30

Կը գտնուի ամէն հայ գրավաճառաց քով

Մամուլ խափանել [illegible] արտօնատէր Գէորգ էֆէնտի [illegible] Միհրիշեան ընտիր [illegible] և օծուն, [illegible] պատուաւորեան դիւ- ני և [illegible] ընտիր [illegible] Ղալաթիա, Բէնչէնիպէշ- [illegible] թերթ [illegible] կրկին [illegible] է Կիպրոսի պաշտօնէութեան [illegible]. Սերապիէն փորձ [illegible] ընտիր [illegible] թէ՛ [illegible] թէ՛ [illegible] և [illegible] ճերմակ [illegible], [illegible] կը յանձնեն թէ՛ ընտրութեան և թէ՛ աժանութեան համար. 1—3

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ